ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 01 - 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «07» «02» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Սուրեն Մաղաքյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հունվարի 12-ի N 20-Ա/2 հրամանով հաստատված «Թրաֆիքինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում» դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 8-ի նիստի 05/24 և 2024 թվականի հունվարի 24-ի 06 արձանագրությունները՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11002. Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ» միջոցառման (տող՝ «Մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումներ») շրջանակներում՝ «Եթե իրազեկ ես, ուրեմն՝ պաշտպանված ես» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 2176.3 հազար (երկու միլիոն հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող

միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված

իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը

ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին

վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի հուլիսի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	ք. Երևան, Նոր-Նորքի 3-րդ զանգված, Բաղյան 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 1570018829580100, ՀՎՀՀ 06405487
Գլխավոր քարտուղար՝	info@fulllife.am
	Նախագահ՝
Հ. Հակոբյան	Ս. Մաղաքյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«07» «02» 2024 թ.
N ԵԴ-01 2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Դասընթացի մոդուլի և պաստառների մշակում և տպագրություն	Իրազեկման հանդիպումների համար մոդուլի և սահիկաշարի մշակում: Տեղեկատվական պաստառների բովանդակային մշակում, դիզայն և տպագրություն	Կազմակերպել և ապահովել սեմինարների համար նախատեսված տեղեկատվական մոդուլի մշակման գործընթացը	Թրաֆիքինգի կանխարգելման ուղղված մոդուլի և սահիկաշարի առկայություն Թվով 100 մշակված և տպագրված պաստառներ	30.04.2024 թ.	30.07.2024 թ.	458.4
2	Իրազեկման սեմինարների կազմակերպում	Ապրիլ-մայիս ամիսներին ապահովել թվով 1000 երիտասարդների մասնակցությունը 1-օրյա սեմինարներին	Դասընթացների կազմակերպում Անհրաժեշտ տեղեկատվական նյութերի և պարագաների տրամադրում	Թվով 1000 երիտասարդներ մասնակցելու են Լիարժեք կյանք ՀԿ -ի կողմից կազմակերպված 1-օրյա դասընթացներին: Թվով 1000 երիտասարդներ ստանալու են անհրաժեշտ գիտելիքներ և	30.06.2024 թ.	30.07.2024 թ.	1259,5

				հմտություններ թրաֆիքինգի դեմ պայքարելու և այն կանխարգելելու վերաբերյալ: Գրանցման թերթիկ Լուսանկարներ			
3	Ամփոփիչ հաշվետվություն	Ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ	Պատրաստել ֆինանսական ամփոփիչ հաշվետվություն		30.06.2024 թ.	30.07.2024 թ.	458.4
	Ընդամենը						**2176.3**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ
ք. Երևան, Նոր-Նորքի 3-րդ զանգված, Բաղյան 2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018829580100, ՀՎՀՀ 06405487
info@fulllife.am
Նախագահ՝
Ս. Մաղաքյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2
«01» «02» 2024 թ.
N ԵԴ-01-2024 պայմանագրի

ՖԻՆԱՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ
Ծրագրի անունը Թրաֆիկինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում
Ծրագրի տևողությունը 3 ամիս

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ (ներառյալ հարկերը)***				
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	3	132.0	396.0
1.2	Ծրագրի հաշվապահ	ամիս	3	120.0	360.0
1.3	Ծրագրի համակարգող	ամիս	3	130.0	390.0
1.4	Դասընթացավար/փորձագետ	ժամ	48	3.5	168.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**1314.0**
2	**Ծրագրային ծախսեր**				
2.1	Տրանսպորտային ծառայություն՝ Երևան-Գյումրի-Երևան, Երևան-Վանաձոր-Երևան, Երևան-Գավառ-Երևան՝ 2-ական անգամ	հատ	1	321.6	321.6
2.2	Տպագրական ծառայություններ, A3 ֆորմատի տեղեկատվական պաստառների դիզայն և տպագրություն՝ 100 հատ x 1000դրամ	ծառայություն	1	100.0	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 2				**421.6**
3	**Վարչական ծախսեր**				
3.1	Կապի ծառայություններ	ամիս	3	6.0	18.0
3.3	Էներգետիկ ծառայություններ	ամիս	3	10.0	30.0
2.3	Գրենական պիտույքներ	ամիս	3	10.0	30.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 3				**78.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1813.6**
	ԱԱՀ**				**362.7**
	ԱՄԲՈՂՋԸ				**2176.3**

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Լիարժեք կյանք» ներառական հասարակության
խթանման ՀԿ
ք. Երևան, Նոր Նորքի 3-րդ զանգված,
Բաղյան 2,
info@fulllife.am
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570018829580100, ՀՎՀՀ 06405487
Նախագահ՝ _____ Ս. Մաղաքյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
« 07 » « 02 » 2024 թ.
N ԵԴ- 01 -2024 պայմանագրի

Համառոտագիր

Ծրագրի նկարագրություն

Յուրաքանչյուր ոք կարող է դառնալ թրաֆիքինգի տուժած՝ կանայք, տղամարդիկ և երեխաներ, անկախ տարիքից և սոցիալական վիճակից: Մարդիկ, ովքեր դառնում են թրաֆիքինգի տուժած, հարկադրված են տրամադրել սեռական ծառայություններ, աշխատել չնչին վճարի դիմաց կամ անվճար, կամ ենթարկվել օրգանների հեռացմանը: Շահագործումը հաճախ ուղեկցվում է ֆիզիկական և էմոցիոնալ բռնությամբ և սպառնալիքներով տուժածների և նրանց հարազատների նկատմամբ: Կոնվենցիայի համաձայն մարդկանց թրաֆիքինգի տուժած է համարվում այն անձը, ով՝ տեղափոխվել, հավաքագրվել, փոխանցվել, պարտակվել կամ ընդունվել է երկրի ներսում կամ նրա սահմաններից դուրս, ենթարկվել է սպառնալիքների, ուժի կիրառման, խաբեության, բռնության կամ այլ ապօրինի միջոցների, շահագործման նպատակով

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ կազմակերպված պայքարն ընթանում է ավելի քան երկու տասնամյակ՝ սկսվելով 2002 թվականին և զգալի առաջընթաց արձանագրելով հետագա տարիներին: Ստեղծվել է հիմնարար իրավական դաշտ, որը եզրագծում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում ներգրավված դերակատարների գործառույթները և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ դարձած անձանց պաշտպանության ու աջակցության շրջանակը:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը համակարգային մոտեցում է պահանջում՝ հաշվի առնելով հանցագործության հարափոփոխ բնույթը և դրան արձագանքելու ճկուն քաղաքականության ու մեխանիզմների կարևորությունը, հասարակության խոցելի շերտերում ներթափանցման աստիճանը և դրան՝ կանխարգելմանն ուղղված գործողություններով ու իրազեկվածության բարձրացմամբ հակազդելու անհրաժեշտությունը, անդրազգային հանցավորություն լինելու հանգամանքը, ինչն անխուսափելի է դարձնում ծագման, տարանցման և նպատակակետ երկրների պատկան մարմինների միջև և հանցագործության խնդիրներով զբաղվող միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցության ձևավորումն ու իրականացումը:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման հարցում անփոխարինելի է հանրության իրազեկվածությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ձևերի, դրանց վտանգների և դրանցից խուսափելու միջոցների մասին: Խնդիրը որոշակի բարդացել է հետքովիդային շրջանում՝ առցանց դաշտի ընդլայնման և հանցագործների կողմից դրա ակտիվ կիրառման պատճառով, պահանջելով վերանայված մոտեցումներ իրազեկման ձևերի ու թիրախային խմբերին

հասանելիություն ապահովելու առումով: Կորոնավիրուսային սահմանափակումների և 44-օրյա պատերազմի՝ հանրության սոցիալական վիճակի վրա ունեցած բացասական հետևանքների արդյունքում ծավալային ու տեսակային առումով փոփոխության է ենթարկվել նաև խոցելի խմբերի կազմը:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարն արդյունավետ իրականացնելու նպատակով մշակվել են եռամյա ազգային ծրագրեր: Վերջինը՝ յոթերորդը, ներառել է 2023-2025 թվականների ժամանակահատվածը, որը նախատեսում է համապատասխան իրազեկման արշավների և հանրային միջոցառումների իրականացում՝ուղղված սոցիալ-մշակութային միջավայրի և ընկալումների փոփոխությանը, բնակչության լայն շերտերի իրազեկվածության բարձրացմանը:

Այս հարցում էական ամենագործուն դերակատարումն ունեն ինչպես զանգվածային լրատվության միջոցները, այնպես էլ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող հասարակական կազմակերպությունները: Հաշվի առնելով վերոգրյալը, «Եթե իրազեկ ես, ուրեմն՝ պաշտպանված ես» ծրագրի շրջանակներում նախատեսվում է համախմբել Երևանի, Գյումրու, Վանաձորի, Գավառի թվով 5 ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և 5 ավագ դպրոցների 16 տարեկանից բարձր ավելի քան 1000 երիտասարդի, ովքեր ձեռք կբերեն բերել անհրաժեշտ գիտելիքներ թրաֆիքինգի դեմ պայքարելու և այն կանխարգելելու համար:

Կազմակերպության փորձառությունը

«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը և նրանց մասնակցությանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ կարողությունների զարգացում, շահերի պաշտպանություն և հանրության իրազեկում:

Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված խնդիրներն են՝

1) Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովմանը՝ աջակցելով աշխատատեղերի ապահովմանը:
2) Իրականացնել հասարակության խոցելի հատվածի (փախստականներ, ծնողազուրկ, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներ, անչափահաս իրավախախտներ) իրավունքների պաշպանություն, սոցիալական աջակցություն և կրթության ապահովմանն ուղղված աշխատանքներ:
3) Իրականացնել սոցիալական, հոգեբանական աջակցության ծրագրեր, ներառելով հաշմանդամություն ունեցող անձանց և ընտանիքներին:
4) Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի կայացմանը, իրականացնելով նպատակային ծրագրեր:
5) Նպաստել ՄԱԿ– ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների կյանքի կոչմանը, իրականացնելով նպատակային ծրագրեր/այս ծրագիրը համահունչ է կանոնադրության այս նպատակին/:

«Լիարժեք կյանք» ՀԿ-ն շուրջ 25 տարի ոլորտում իրականացնում է բազմաթիվ ծրագրեր իր կանոնադրությանը համապատասխան ուղղված ներառական միջավայրի ձևավորմանը: Ստորև թվարկված են կատարված ծրագրերից միայն մի քանիսը

Ծրագրի անվանում	Ծրագրի ժամանակահատվածը և բյուջեն	Դրամաշնորհատու կազմակերպություն	Ծրագրի արդյունքներ
«Մեր ապագան մեր ձեռքերում է»	2023թ 9,680,700 ՀՀ դրամ	ՀՀ ԿԳՍՄ	Թվով 100 երիտասարդներ մասնակցել 4-օրյա դասընթացներին սոցիալական ձեռներեցության վերաբերյալ՝ խթանելով վերջիններիս աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը և առաջնորդությանը:
«Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավում՝ աշխատանքի միջոցով» (LIFE)	2012- 2016թ 15.608.000 ՀՀ դրամ	ԱՄՆ ՄԶԳ	Լոռու, Գեղարքունիքի և Տաուշի մարզերում ուրջ 70 հաշմանդամություն ունեցող անձ մասնակցել է մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի նախապատրաստման դասընթաց և անցել աշխատանքի:
Կառուցենք ապագան սեփական ձեռքերով	2020-2021 21.000.000 ՀՀ դրամ	ԱՄՆ դեսպանատուն	Հանրապետության ողջ տարածքից 18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքներից շուրջ 160 երիտասարդներ մասնակցեցին 10-օրյա դասընթացների սոցիալական ձեռներեցության, բիզնես վարելու և գաղափարի ներկայացման դասընթացներին
«Ամեն ինչ մեզ հետ, մեզ համար»	2010-2012թթ 44,315,491 ՀՀ դրամ	Եվրոպական միություն	Լոռու, Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի 19 քաղաքների հաշմանդամություն ունեցող անձիք իրազեկվել են իրենց իրավունքներին , ինչպես նաև տեղի է ունեցել

			հաշմանդամություն ունեցող անձանց ՇՊ արշավներ:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակ՝

- Հայաստանում թվով 5 ԲՈՒՀ-ում, և թվով 5 ավագ դպրոցներում սովորող 16 տարեկան և բարձր թվով 1000 երիտասարդներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ թրաֆիքինգի դեմ պայքարելու և այն կանխարգելելու վերաբերյալ:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Ապահովել 16 տարեկանից բարձր թվով 1000 երիտասարդների մասնակցությունը իրազեկման սեմինարներին:
2. Բարձրացնել երիտասարդության իրազեկվածության մակարդակը, կնվազեն թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու ռիսկերը, հանրության շրջանում կվերանա թրաֆիքինգի և շահագործման զոհերի նկատմամբ անհանդուրժողականությունը/ անտարբերությունը:
3. Խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը և առաջնորդությանը:

Գործողություններ՝

1. Համագործակցության հաստատում համապատասխան կրթական հաստատությունների հետ և մասնակիցների հավաքագրում:
2. Իրազեկման հանդիպումների համար մոդուլի մշակում:
3. Տեղեկատվական պաստառի բովանդակային մշակում, դիզայն և տպագրություն:
4. Իրազեկման արշավների կազմակերպում:
5. Ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ:

Դասընթացի ընթացքում մասնակիցներին կներկայացվեն[1]՝

- Իմանալ ի՞նչ է թրաֆիքինգը որպես երևույթ:
- Ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհներով է այն իրագործվում:
- Ինչպե՞ս զերծ մնալ նմանատիպ երևույթներից:
- Կարողանալ լինել առավել անվտանգ:
- Թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի հիմնական պատճառները:
- Այդ երևույթների կանխարգելման մեթոդները:

[1] 3 ժամ տևողությամբ դասընթաց, որից 1.5 ժամը տեսական դասախոսություն, 1 ժամ գործնական աշխատանք, 0,5 ժամ հարց ու պատասխան

- Աշխատանքի հավաքագրման անվտանգության կանոնները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն	*«Լիարժեք կյանք» ՀԿ*
Ծրագիր	*«Եթե իրազեկ ես, ուրեմն՝ պաշտպանված ես»*
Ժամանակահատված	*01.04.2024 – 30.06.2024*

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներն են՝ ՀՀ ողջ տարածքի 16 տարեկանից բարձր թվով 1000 երիտասարդներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև առողջական տարբեր խնդիրներ ունեցող անձիք, ընտանիքների անապահովության գնահատման

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս		
			3	4	5
1.	Համագործակցության հաստատում համապատասխան կրթական հաստատությունների հետ և մասնակիցների հավաքագրում:	Ծրագրի ղեկավար			
2.	Իրազեկման հանդիպումների համար մոդուլի մշակում:	Փորձագետ Ծրագրի ղեկավար			
3.	Տեղեկատվական պաստառների բովանդակային մշակում, դիզայն և տպագրություն	Ծրագրի ղեկավար Փորձագետ			
4.	Իրազեկման արշավների կազմակերպում	Ծրագրի ղեկավար Փորձագետ			
5.	Ծրագրի մշտադիտարկում	Մոնիթորնգի մասնագետ			
6.	Ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ	Ծրագրի ղեկավար Հաշվապահ			

համակարգում հաշվառված անձիք:

Ծրագրի շրջանակներում որպես ուղղակի շահառուներ դիտարկվում են սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների խմբեր, որոնք ներառում են՝

- հաշմանդամություն ունեցող երիտասարդներ,
- փախստական, տեղահանված, ապաստան հայցող կամ նմանատիպ կարգավիճակում գտնվող երիտասարդներ,
- զինվորական ծառայությունից նախորդ 1 տարում զորացրված և ազատամարտիկ երիտասարդներ,
- պատերազմի մասնակիցներ և պատերազմից անմիջականորեն ներազդված երիտասարդներ,
- ազգային փոքրամասնություն ներկայացնող երիտասարդներ,

- գյուղական և/կամ սահմանամերձ/սահմանապահ համայնքներում ու բնակավայրերում բնակվող երիտասարդներ,
- ներգաղթյալ և հայրենադարձված երիտասարդներ,
- չսովորող և չաշխատող երիտասարդներ ներառյալ գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներ,
- քրեական պատժից ազատված, նախորդ մեկ տարում ազատված և վերահսկողության տակ գտնվող երիտասարդներ

Ծրագրի ամբողջ ընթացքում հաստատվում է սերտ համագործակություն շահագրգիռ կողմերի հետ, ծրագրի մասնակիցների հայտնաբերման նպատակով մասնավորապես համագործակցությունն իրականացվում է հետևյալ ձևերով.

- տեղեկատվական համագործակցություն.
- վարչական-կազմակերպական համագործակցություն.
- համակարգող և խորհրդատվական մարմինների ձևավորում.
- սոցիալական դեպքի վարման շրջանակներում բազմամասնագիտական խմբի աշխատանք:

Ծրագրի ընթացքում վեր հանված շահագրգիռ կողմների ցանկը ներկայացված է ստորև

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու մարզպետարաններ
- Երևանի քաղաքապետարան
- Երևանի պետական համալսարան
- Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
- Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Մարզպետարաններ
- ՀԼՄ

Ռիսկերի գնահատում

Ռիսկի նկարագրություն	Ազդող գործոնությունը	Պատասխանատու	Կիրառելի ռազմավարություն
Համավարակի բռնկում մասնակցիների և փորձագետների շրջանում	Ծրագրի բնականոն ընթացքի խաթարում, ընդհուպ մինչև ծրագրի վերջնաժամկետների խախտում	ծրագրի ղեկավար	անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանում

Ծրագրի փորձագետների աշխատանքից հեռացում	Ծրագրի բնականոն ընթացքի խաթարում	ծրագրի ղեկավար	պահեստային փորձագետների ցանկ

Ծրագրի աշխատակազմը

	Անուն Ազգանուն	Պատասխանատվության շրջանակը	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1.	Սուրեն Մաղաքյան	**Ծրագրի ղեկավար** *Պլանավորել, ղեկավարել և վերահսկել ծրագրի ողջ ընթացքը*	«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ, կազմակերպության և ծրագրերի ղեկավարման ավելի քան 25 տարվա փորձառություն
2.	Տաթևիկ Ղազարյան	**Ծրագրի համակարգող** *Մշակել ծրագրի գնահատման համակարգ և գործարկել այն թիմի հետ միասին: Ապահովել ծրագրային բոլոր բաղադրիչների անխափան իրականացումը: Ապահովել ծրագրի տեսանելիությունը*	«Լիարժեք կյանք» ՀԿ գործառնական տնօրեն, նմանատիպ ծրագրերի ղեկավարման ավելի քան 8 տարվա փորձառություն
3.	Քրիստինե Հովհաննիսյան	**Փորձագետ/դասընթացավար** *Տեղեկատվական նյութերի բովանդակային ապահովում, իրազեկման հանդիպումների մոդուլի մշակում, դասընթացների իրականացում*	Ղեկավարել է ՀՀ ԱՍՀՆ Հավասար հնարավորությունների ապահովման վարչությունը, այդ թվում մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժինը:
4.	Գոհար Գևորգյան	**Ծրագրի հաշվապահ** *Ապահովում է ծրագրի ֆինանսական կայությունը*	«Լիարժեք կյանք» ՀԿ գլխավոր հաշվապահ, տեղական և միջազգային ծրագրերի հաշվապահական գործունեության ավելի քան 15 տարվա փորձառություն:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Լիարժեք կյանք» ներառական հասարակության
խթանման ՀԿ
ք. Երևան, Նոր Նորքի 3-րդ զանգված,
Բաղյան 2,
info@fulllife.am
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570018829580100, ՀՎՀՀ 06405487
Նախագահ՝ _____ Ս. Մաղաքյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 4
«04» «03» 2024 թ.
N ԵԴ -01 -2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 5
«01» «02» 2024 թ.
ԵԴ - 01 – 2024 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծություն՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման
ք. Երևան, Նոր-Նորքի 3-րդ զանգված, Բաղրամ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018829580100, ՀՎՀՀ 06405487
info@fulllife.am
Նախագահ՝
Ս. Մաղաքյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«07» «02» 2024 թ.
N ԵԴ-02-2024 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.